

ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կես տարվան 6 ռուբլ:
Առանձին Համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պատրաստվողքները դիմում են ուղղակի
Խմբագր. Редакция „Мшакъ“)

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչուր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ԿՐ ՀՐԵՏԵՐԵԿՈՒ ԵՄԵՆՆ ՕՐ, բացի տոն և տոների հե-
տեւէլ օրերէն:

Լրագրի գինը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵԿԻՆՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլ է, կես տարվան 6 ռուբլ: Գրքեր կարելի է ՄԻԼՅՆ
ԽՄԵՐԵՐԵՏԵՐԵՆ մէջ:

ԵՄԵՆՆԻ ՀԵՐԵՐԵՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատր:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով ТИФ-
ЛИСЬ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հայոց լրագրութեան միճակը.— Ներքին տե-
րութիւնը: Նոր ցանկալի տիպ: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր: Որ տաք ին տեսու-
թիւն: Անգլիա: Գանիա: Նամակ Թիֆլիսից:—
«Մշակ» հեռագիրներ:—Հայտարարութիւններ:—
Բանասիրական: Հանգուցեալ Սարգիս Կոպ-
կոպոսի կտակը:

ՀԱՅՈՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Հայոց լրագրի խմբագրին երեւի
թէ միշտ վեճակված է իր գրը-
պանից լրագրի հրատարակման
պակասող տարեկան ծախսը
ծածկել միշտ գեֆիցիտ ունենալ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԳՈՒԹԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՓՈՍԻ ԿՏԱԿԸ
Բանուն մարդասիրին Աստուծոյ Հօր և Որդւոյ
և Հոգոյն սրբոյ:
«Ես Սարգիս արքայախոյոսն Հասան Զալ-
լեանց» միաբան սրբոյ վանիցն Էջմիածնի, ծնեալ
ի Թաւադանի փրկչական 1810, յԱրտաղ գաւառի
ի գինը Նիկիւն, ծառայեալ եմ ազգին հայոց իմու-
սանն զման յիսուն, մանաւանդ յաւուրս երջանկայի-
շատակ հայրապետին ամենայն հայոց տեսուն Ներ-
սիսի: Ես աշտարակեցոյ հոգեւոր ծնողին իմոյ և
մինչև յայժմ ի յաւուրս ծոցն զման զանձնալ եմ
գլխան և հինգ հազար ռուբլի արծաթով, որ զը-
տանի յարգուն Պրիկազն Տիֆլիսոյ և զոր տնա
մատուցանեմ ի սեղան փառաց և բարօրութեան
ապագայ սերնդեան ազգին հայոց լուսաւորչակա-
նաց հիմնելով ի վերայ 1015 յօգուածոյ առաջնոյ
մասին մետաւաններով հատարոյ օրինաց ռուսաց
տէրութեան, որով տուեալ լինի միաբանից սրբոյ

և երբեք այնքան արդիւնք չը սը-
տանալ իր թերթից, որ զբանով
ծածկի թերթի հրատարակման
տարեկան ծախսը: Ե՛լ ևս չենք
խօսում արդիւնքի աւելորդի վրա,
որով կարելի լինէր բարեօրէն լրա-
գիրը, վարձել լաւ գրողներին,
պահել թղթակիցներ եւրօպական
մայրաքաղաքներում, և Պոլսում
և Հայաստանում... Ե՛լ դու-
թեանը հայոց լրագիրը հարկը
տարուց յետոյ էլ չի հասնի...
Ե՛լ դեռ բաւական չէ: Հա-
յոց լրագրին գրփողներից շատերը
իրանց պարտաւորութիւնը չեն
համարում վճարել իրանց ստացած
լրագրի բաժանորդագիրն անգամ,
այնպէս որ հայոց թերթը իւրա-

Էջմիածնի գիրաւունս կտակելոյ գոյոյ իւրեանց յօ-
գուտ աստուածանայնոյ գործոց:
բ. Գանձն տունեմ սրբին բարեկամացս իմոյ
Տիֆլիսեցի ազնական Աղէքսանդրի Ղազարեան
Թահիրեանց և ազնական Պապատի Սեփեան
Գորգէնքեղեանց և ազգականին իմոյ Միկիթա-
րայ Հասան Զալալեանց, զի ի միասին ընդ որդե-
գիրն իմոյ Նիկողայոսի Տէր-Յակոբեանց զգին մա-
հուան իմոյ առաքելոցն զիսական կտակագիրս
այս ընդ նմին և զմուրակագիրն դրամոց ի ճե-
մարանն Լազարեանց արեւելեան լեզուաց, որ ի
Մոսկով, առ ի պահպանել զայն ի զանձարանի
ճեմարանին. իսկ զօրինակս նորին առաքելոցն ի
քաղաքս կամ ի վանօրայս, ուրանօր կառուցեա-
նելոց են ի ներքոյ յիշեալ ուսումնարանցն, և
տպագրութեամբ ևս հրատարակեցեն ի գիտու-
թիւն հասարակաց:
գ. Խնամատարութիւն վասն ամբողջութեան
դրամագրոյն և պահպանութեան նորա, նորեւեա
և տոկոսեանց պատկանի կտակագրութեան յի-
շեալ ճեմարանին, որ պարտի զգրամագրութեան թո-
ղու անշարժ կամ ի յիշեալ Պրիկազն Տիֆլիսոյ,
կամ յարձանական բանին տէրութեան ռուսաց և
կամ յայլ ապահով տեղին հարկը քան և հինգա-
ման հաւուր դրամագրութեան այն ի բարդմանէ
տոկոսեանց բազմանալ ունի ցերեկոտանս միլիոն
ռուբլիս արծաթով: Եթէ ըստ հանգամանաց ժա-

քանչիւր տարի անպատճառ ա-
պառիկներ ունի:

Բացի սորանից հայոց լրագրի
կարգացողների թիւը միշտ երկու-
երեք անգամ մեծ է լինում, քան
թէ բաժանորդների թիւը: Հայր
նայում է հայոց թերթի վրա,
ինչպէս մի մանաւոր գործի վը-
րա... (Թո՛ղ չարչարվի խմբագիրը,
ինձ ի՞նչ փոյթ, ասում է հայր,
թո՛ղ իր փոյն էլ ամեն տարի
լրագրի հրատարակութեան վրա
գնի... Իսկ ես կամ ձրի կը կար-
գամ, կամ կը գրվեմ և փող չեմ
վճարի... Թո՛ղ լրագիրը ոչնչանայ,
ինձ ի՞նչ...)

Ե՛լ պիտի անտանելի հանգա-
մանքներում հայերի մէջ լրագիր,
մանաւանդ ամենօրեայ թերթ հր-
ատարակելը, հրաշք պէտք է հա-
մարվի:

Հասարակութիւնը չէ օգնում
լրագրին, կարծելով որ լրագիրը մի
մանաւոր մարդու կապրիզի
գործն է և ոչ թէ մի հասարա-
կական անհրաժեշտ հիմնարկու-
թիւն, և այդ պատճառով լրա-
գիրները հայերի մէջ կարող են
պահպանել միմիայն մանաւոր
անձանց ոյժերով և նոյն իսկ
խմբագրի նիւթական միջոցներով:
Եթէ խմբագիրը կամ հրատարա-
կողը քիչ շատ ունենոր մարդիկ չը
լինէին, ոչ մի հայոց թերթ գո-
յութիւն չէր կարող ունենալ:

Ե՛լ հայի ինքնաճանաչութեան
չափը իր կենսական ամենամահա-
ծեշտ պահանջների մէջ...
Ուրեմն հայերի մէջ լրագրի
հրատարակելը մի ժամանակաւոր,

և ոչ թէ մի հաստատուն գործ
է, որովհետեւ հենց որ խմբագիրը
կամ հրատարակիչը, որոնք անձ-
նութիւններ են օգնում էին իրանց
դրամական միջոցներով լրագրի
հրատարակութեանը, կը վախ-
ճանվեն, և լրագրի հրատարակու-
թիւնը անպատճառ կը խափան-
վի...

Մեր լրագրութեան մէջ որ
ներկայացնում է միմիայն տխուր
և անմխիթար կողմեր, որ խոս-
տանում է մի շատ անմխիթար
ապագայ, կայ միայն մի մխի-
թարական կողմ, այն է մեր
թղթակիցների և աշխատակից-
ների մեծ մասի անխարժ աշխա-
տակցութիւնը:

Նրանք էլ իրանց ոյժերը նուր-
ում են ձրիաբար մեր մանուկ
լրագրութեան գործին, ինչպէս
այդ անում են և իրանք խմբա-
գիրները, հասկանալով թէ քանի
որ մեր հասարակութիւնը ան-
տարբեր է մնում դէպի ամեն
մտաւոր շարժում, մեր լրագրու-
թեան գործը պէտք ունի նրանց
օգնութեան: Մեր թղթակիցնե-
րը հասկացել են, որ լրագրին
թղթակցելը նշանակում է յայտ-
նել հրապարակապէս հասարակու-
թեան անհրաժեշտ կարիքները,
ուրեմն թղթակցութիւնները դար-
ձել են մի անհրաժեշտ պահանջ
նոյն իսկ հասարակութեան խե-
ղացի մասի համար:

Դուրս համար մենք չորհա-
կալութիւն ենք յայտնում մեր
թղթակիցներին:

Գ. Ա.

մանակն պահանջեցին ամբ առաւել կամ պա-
կաս քան զնշանակեալսն յինչն հարկ է տնօրինել
ըստ այնմ, մինչև հասցէ դրամագրութեան լրագրեան
իւրում, այն է ցերեկոտանս միլիոն ռուբլիս ար-
ծաթով, և ամուսնեալս դրամագրութեան մնացել ի
լրագրեան և յարողութեան իւրում անձեռնմխե-
լի իսպառ, իսկ ի նմանց գոյացեալ տարեկան
տոկոսը սկսանիցն գործադրել շարունակ վասն
օգտի և բարոյական կրթութեան զաւակաց ազգիս
ըստ յետագայ տրամադրութեանց:
դ. Կտակագրութիւն Լազարեանց ճեմարանի
պարտ է առնել միշտ առանց յետաձգութեան
զտնօրէնութիւն վասն բարդելոյ յիւրաքանչիւր ամի
զտոկոսին ի վերայ մայր գումարին, հսկել զի ան-
մտանդ և անկորուստ մնացին տոկոսիքն, և եր-
բեմն երբեմն հրատարակել ի լրագրիս զըրու-
թեան զրամագրոյն և զըրբանութեան տոկո-
սեանց կցելոց ի դրամագրութեան, և եթէ հարկաւոր
տեսնէ կարէ փոխադրել զըրամն անոր, ուր ա-
ռաւել արդիւնաբեր լիցի աճումն նորին և ապա-
հովութիւն անկասկածելի:
ե. Ի յրանալ ժամանակին և յիրագործել Աստու-
ծով խորհրդոց կտակիս, այն է ի հասանել դրա-
մագրութեան ցերեկոտանս միլիոն ռուբլիս արծաթով,
կտակագրութիւն Լազարեանց ճեմարանի թող-
լով զըրամագրութեան անշարժ ստանալ յիւրաքան-
չիւր ամի զտարեկան տոկոսիս և բաժանել ի
քան և չորս հաւասար մասունս, առցէ զմի մասն

յօգուտ ճեմարանի Լազարեանց վասն մշտնջենա-
ւոր պահպանելոյ ի նմա և դատարարակելոյ յա-
նուն իմ գործիցիս ի չքաւոր զաւակաց ազգիս,
առաւելապէս կողմանցս Կովկասու: Թիւ որդեգ-
րաց որդի ըստ հաւուր տարեկան ծախսոց նո-
ցին և արդեանց, զորս ճեմարանն ունի, ստանալ
ի բաժին իւր: Զմի մասն տացէ Լազարեանց, Հա-
մարանին Մոսկովայի վասն մշտնջենաւոր պահ-
պանութեան և դատարարակութեան յանուն իմ
զուսանողս ի հայ ազգէ: Թիւ յայտցիկ իւսանո-
ղաց նոյնպէս որդի ըստ հաւուր տարեկան ծա-
խուց նոցին և արդեանց, զորս համարանան ու-
նի ստանալ ի բաժին իւր: Զերկուս մասն տացէ
Աթոռոյն սրբոյ Էջմիածնի վասն հիմնե-
լոյ և պահպանելոյ ի մշտագրութեան յԱրարա-
տեան նախնիք յապահով և ի յարմարաւոր տեղ-
ւոյ զուսումնարան ժառանգաւորաց, բաց յայն-
ման վասն նորոգելոյ ամ ըստ ամէ և պահպա-
նելոյ ի բարեգաղութեան զաւանս սրբոյ Էջ-
միածնի և զմերձակայ վանօրայս սրբոյ Գայիկա-
նեանց, Հռիփսիմեանց և Եղորակաթու: Զերկու-
ս մասն տացէ Աթոռոյն սրբոյ Երուսաղէմի վասն
կառուցանելոյ և պահպանելոյ անդ նոյնպէս զու-
սումնարան ժառանգաւորաց, Զերկուս մասն տացէ
Պատրիարքարանին և Պոլսոյ վասն հիմնելոյ ըզ-
ղարոց ժառանգաւորաց ի վասն սրբոյ Աստուա-
ծածնին Արմաշու ընդ իշխանութեամբ վանաձոր
նորին և ժողովոյ միաբանութեան նոյն վանից: Զմի

Նայելի,
բոլոր երեւ
մի բու
որ շրջ
կողմնե
նական
սամբ
րով: Թ
լուսմ
նու թի
քաղաք
իրաւո
ւորներ
այդ եր
շատ ան
դիայի
պատկա
քանի
պով տ
աշխատ
նարգա
խառն
տալ:

Իրան
երկար
դադար
դային
Ժաման
ի հարկ
մենամ
հարուս
րեց, կ
դունե
կար (!)

Որով
մէջ ան
դրա հ
քանի
միտին
ւելի
գործ
թեան
մից զ
Դուբլ
թիւնն
հրաման
Ժողով
3 հոգ
Կիրէն
րացրին
մից սկ
ցիաներ
մից չ
թիւնն
Մօրնո
կենտրո
Ժողով
նամակ
գործե
ն:

Կարծ
գործը
նիստը
Կարբեկ
տանակ
խոյ Դո
Մօս
հրաման
ներին
դնեն յ
ղաղութ
խնայե
պարտ
լիական
ստացել
պաճին

խաղաղիկ համարվեն: Բայց այդպէս չէ նոր վտանգը:

Նայեցէք Բրիտանիայի վրա, այն Բրիտանիայի, որ պարծնում է թէ կարող է բոլոր երկրագնդի տէր լինել: Այդպիսի մի դժուար պետութիւն այժմ մնացել է միջուկում մի բուն իրանդացիների առաջ: Իրանդիան որ շրջապատող բազմաթիւ մեծ ու փոքր կղզիների հետ միասին կազմում է բրիտանական պետութիւնը, բնակեցրած է մեծ մասամբ զործաւոր և երկրագործ դասակարգերով: Քէն այդ երկրի բնակիչներն էլ վայելում են մի և նոյն իրաւունքներն ու արտօնութիւնները, ինչպէս և Անգլիայի ուրիշ քաղաքացիները, և չը նայելով, որ նրանք իրաւունք ունեն ուղարկել իրանց պատգամաւորներին պարլամենտի մէջ, այնուամենայնիւ այդ երկրի հողային և կալուածային միջակը շատ անասնաբաններ զբաղւած են մէջ է: Իրանդիայի բոլոր հողերը, փոխանակ ժողովրդին պատկանելու, սեփականութիւն են դարձել մի քանի հարուստ լորդերի, որոնք անխնայ կերպով աննջում ու հարստահարում են խեղճ աշխատակէր դասակարգին: ոչինչ այնպէս անարդար ու վիրավորեցուցիչ չէ ինչպէս աշխատել և աշխատութեան պատուը ուրիշին տալ:

Իրանդացի ազնուամիտ ներկայացուցիչները երկար ժամանակ է վեր անդադար ու անդադար բողոքում էին պարլամենտի մէջ հողային բաժանմունքների դէմ, և հողային բաժանման նոր ծրագիրներ էին ներկայացնում: Ի հարկէ պարլամենտը, որի անդամների առմեամեծ մասը բողոքացած են մի և նոյն հարուստ ու հարստահարող կալուածատէրերից, կառավարութիւնն իրան յենակետ բնադրուելով, միշտ մերժում էր այդպիսի նպատակարար (!) առաջարկութիւններ:

Որովհետեւ երկար ժամանակ պարլամենտի մէջ անտես էր անվում իրանդական բողոքը, դրա համար այնտեղ մի շարքում սկսվեց մի քանի նշանաւոր մարդիկ սկսեցին ժողովներ, միախմբել կազմել, ծառեր կարգաւ, և հրաւիրել ժողովընդուն աւելի ազդու միջոցներ գործ դնել: Այս լուրը հասաւ կառավարութեան ականջին և նա սկսեց այս և այն կողմից զօրքեր բերել տալ և կենտրոնացնել Դուբլինում և Իրլանդիայի մի քանի ամրութիւնների մէջ: Կառավարութեան առանձին հրամանով բանտարկվեցան զորքողների և ժողովրդական հռետորների պարագլուխներից 3 հոգի: Դրանք են պ. պ. Դաւիթ, Դէյլ և Կիլլեն: այս բանտարկութիւնները սաստիկ զայրացրին ժողովրդին, և այնուհետեւ ամեն կողմից սկսեցին աւելի եռանդուն գէմմանտաքիաներ անել: Կառավարութիւնն էլ իր կողմից չը քննեց, և նա գործի հետախուզութիւնն ու հարածումը յանձնելով պ. Ժոն Սթրոնգին, իսկոյն հրաման տուեց նոր ոյժեր կենտրոնացնել իրանդական ցամաքի վրա: Ժողովուրդն էլ իր կողմից կրկնապատկեց թիւը՝ նամական ցոյցերը, և այժմ Անգլիայի ներքին գործերն այսպիսի լարված դրութեան մէջ են:

Կարծում են որ երեք բանտարկվածների գործը զիսաւոր դատարանին կը մատնվի, որի նիստը կը կայանայ զաւ ամսվայ սկիզբներում Կարբէկոն-Շանոնի մէջ, որից յետոյ դատաստանական բնութիւնը կը շարունակվի նոյն իսկ Դուբլինում:

Շատ օրերս կառավարութիւնը նորից խիստ հրամաններ ուղարկեց Իրլանդիայի գորապետներին, որ բոլոր ազդու միջոցները ի գործ դնեն յուզված գաւառների բնակիչներին խաղաղութեան մէջ պահելու, ոչինչ միջոց չը խնայեն կալուածատէրերին պէտք եղած պաշտպանութիւնը ապուլ: բացի այն անդ՝ լիական երկու բառախօսներ հրաման են ըստ ստացել պատրաստ մնալ որպէս հարկը ստիպածին պէս, իսկոյն Իրլանդիա անցնեն: Մի

և նոյն հրամանն ստացել են նոյնպէս և Մանչեսթերի թագաւորական դրագոնների խումբը: Կառավարութիւնը վախենալով թէ մի զուգէն ապստամբութիւն կը ծագի Բալլայի մէջ տեղե ունեցած միախմբել առիթով, անմիջապէս հրաման տուեց, որ մի քանի խումբ զինուորներ ուղարկվեն այնտեղ: Բալլայի մէջ պ. Դաւիթն ամենքից շատ ժողովրդականութիւն ունի, և դա յուզված գաւառների մէջ կարող է պարապելու համարվել:

«Central News» լրագիրը հաւատարմում է, որ կառավարութիւնը տեղեկացել է թէ ամերիկացի կամեում են օգուտ քաղել դէպքից և ապստամբացնել Իրլանդիան մի և նոյն լրագիրը հաղորդում է, որ նրանք արդէն դիմել են զէնքի մի քանի զործարանատէրերին, որպէս զի այդ դիտաւորութեամբ զէնքեր պատրաստել տան, բացի այդ նրանք արդէն պատուիրել են երկու նաւեր, որպէս զի նրանք միշտ Նիւ-Սօրկում պատրաստ լինեն, որ հարկաւոր եղած ժամանակ զէնքեր հասցնեն Իրլանդիա: Կառավարութիւնն այժմ հիմնվելով այս լուրի վրա, պոլեցիական առանձին հսկողութեան է ենթարկել ամերիկական բոլոր այն նաւերը, որոնք գտնվում են իրլանդական նաւահանգիստներում:

Հետեւել անգամ մեք կը խօսենք այն նշանաւոր միախմբելի մասին, որոնք կազմվում են իրլանդացի մէջ:

ԴԱՆԻԱ

Դանիայում և ամբողջ Սկանդինավիայում հանդիսաւոր կերպով տօնեցին Ալգամ Էօհէն շլազէր մեծահամբաւ բանաստեղծի ծննդեան հարիւրամեայ տարեդարձը: Նրեւելի բանաստեղծն իր գրուածքներով մեծ գարկ ու նոր և ունեւ է տուել դանիական գրականութեանն ու նրա ազգային կենսիկ ստարգրին: Մեծ բանաստեղծի յիշատակին նուիրված հանդէսները մասնաւոր նշանաւոր էին Կօպէնհագէնում, ուր ծնվել էր նա, և ուր անց էր կացրել իր կենսիկ ամենամեծ մասը: Գաղափար բոլոր աները զարդարված էին գոյնզգոյն դրօշաւներով: Նրաժշտական խումբը ածում էր ազգային թատրոնի մուտքի առաջ նոյն իսկ Էօհէնշլազէրի արձանի տակը: Ժողովրդի անթիւ բազմութիւն այցելեց բանաստեղծի շիրմին, և ծածկեց նրան դափնի պսակներով: Այն փողոցը, որի վրա կառուցված էր բանաստեղծի վարդի մի բնակարանը, բոլորովին սփռված էր ծաղիկներով: Նրեկոյնան Կօպէնհագէնի բոլոր թատրոններում հանդիսաւորներ կայացումներ տուին, և զիշերվայ ժամը տասն և մէկին ուսանողները և արտիստները մի ահագին խումբ ջահերով և լուսաւորութիւններով գնացին բանաստեղծի դափնիով պսակած արձանի առաջ, ուր մի մեծ օրհնասուր և երգողների ահագին խումբ մասնաւորապէս այդ հանդէսի համար պատրաստված երգեր էին երգում: Ամբողջ քաղաքը հանդիսաւոր կերպով լուսաւորված էր:

ՆԱՄԱԿ ԹԻՂԻԳԻՍՈՒՑ

Տրապիզոն, 3 նոյեմբեր

Ղերբըն Տրապիզոնէն եկաւ Պոլիս գնաւու Կիրակոս էֆ. Ղազանճեան երջկացի հայն, որ Սաֆիէթ փայլալ: եպարքոսութեան օրով նշանակվեցաւ քննիչ և ուղարկուեցաւ Թուրք պաշտօնային մի հետ ի Տերսիմ ստանակ քրդերը զսպելու համար: Տերսիմ մի բաւական ընդարձակ աշխարհ է, որ կը տարածուի Երզնում և Նըզկիայի մէջ: Կիրակոս էֆէնդի, որ կարողացեր է մանկ դաւառն ամենածածուկ խորշերը, կը պատմէ

թէ խիստ հարուստ երկիր մ'է: զեղեցիկ անտառներ կը հովանաւորեն անթիւ բուրններու զաւուկայրքը, յստակ աղբիւրներ և յորդաւոր վտակներ կուտան խորախոր հովիտներ: Ողջ գաւառը կը ներշնչէ զմայլում և սքանչացում, այնքան անապակ է օդը, անոյշ է ջուրը և զեղանկար են դաշտերու, արօտներու, բլուրներու դիրքն ու ձևը: Բնակիչք կայտառ են, կարմիր այտ, կարմրաւար շորեր, բոցափառ աչուք, բարձր ճակատ, սև ու աւառ մազերով, կին թէ այլ ունեն զարդարված գլուխ: Կլիմայն, մէկ խօսքով, իր ամենապատգելիութիւնը ներգործիչ է այդ երկրի կէս վայրենի գաւառացի վրայ: Շատ հետաքրքրական են Կիրակոս էֆէնդիի տեղեկութիւնք, զորս, մասնաւոր մի գրքով կը մտադրէ հրատարակել, իսկ են իմ լածները կը շտապեմ ընթերցողներուդ հաղորդել: Տերսիմ, մինչև վերջի ատեններս, լոկ քուրդերու բնակութիւն կարծուած էր, և Կիրակոս էֆէնդին այ, երբ Կ. Պոլիսէն մեկնեցաւ, այնտեղի քրդերը պատժելու պաշտօն ստացած էր: Հասաւ թէ չէ նոցա մէջ իր առջև քրդեր չէին որ յերևան եկան, այլ հայեր որոնք, զանազան պատճառներով մէկ քանի դար առաջ թողնուած էին իրենց դաշտային բնակութիւններն, դասալքեր էին (deserter) հայ եկեղեցին, հայ կրօնը և քաղաքը ու առանձնացեր էին այդ արքերու ծայրը, անդ հանդիստ և հալածանքներու երեսէն հեռու ապրելու համար: Դէպք մը, զոր կարծէ պատմել, եկաւ այս գաղտնիքները Կիրակոս էֆէնդիի ծանօթացում: Երբ հայ պաշտօնային Թուրք պաշտօնային հետ շրջապատութեան ելած ման կուգար, մէկ քանի զիւղացիներ Թուրք հայ կարծելով ոտքը կիյնան և կըսեն զՊոլիսէն մեղ քննելու եկաք, դուք հայ էք, ազատեցէք զմեք, մենք քրիստոնեայ ենք, այսքան տարի որ ստիպուած ենք դադանի պաշտել մեր կրօնը, էլ այսքան բաւական է: Դէպք պէքը զարմացած, գնացէք, կըսէ, Կիրակոս էֆէնդին որ բաւական հեռացած էր: Յետոյ զիշեր մը, կը պատմէ հայ պաշտօնային, երբ վրանիս տակ կը պատրաստուէի անկողին մտնել, փեղկերուն ներքեւն երկու անձ ներս կը մտնեն, ահա սարսափի մէջ զննք ձգելով:—Ո՞վ էք, ինչ կուգէք:—Էֆէնդիմ, մենք աւազակ չենք, մենք հայ ենք, մենք 11 տուն ենք, դաւաքանակ Տէր Մարտիրոս քահանայ Բէգմէզեանը մեր հայրն է:—Նա ձեզ թող պատմէ մենք ինչ անգութիւններ կը իրենք: ազատեցէք զմեզ: Կիրակոս էֆէնդին, հարցում փորձի կը դիմէ և վերահասու կը լինի ստուգութեան: Այն օրէն, իր պաշտօնը կարծես աւելի վսեմ կը դառնայ իրեն համար, և ամեն քայլի ինչ բանի որ կը հանդիպէր, կը նշանակէ իշխանապետին մէջ որ անշուշտ շատ քաղքի պէտք է լինի: Ըստ իր պատմութեան, Տերսիմ բնակչաց թիւն է (300,000) և երեք տարեկը ծագումն ունեն: Ա. Հին Մարք, ք. օտարացած հայք, գ. պարսիկք: Թէպէտ ցեղով կը զանազանուին, բայց բարքով և սովորութեամբ նման են միմեանց: Լեզուն հասարակ է ամենքին և շատ հայ բառերով լի, ամուսնութեան, թաղման, ծնունդի արարողութիւնք մի և նոյն են: Մարմնակար իշխանութիւնը 20—24 ցեղապետներու ձեռքն է, որք, միշտ կուրի մէջ են միմեանց դէմ, իսկ հոգեւոր իշխանութիւնը ձեռնարկը կը վայելն: Ցեղապետ թէ սէխտ, զաւակէ զաւակ կը յանձնեն իրենց իշխանութիւնը: Մասնաւոր աղօթատեղի չեն չինք, սէխտը որ տունը որ կիլիւն այնտեղ աղօթք կընէ: մզկիթ և կամ մօլլան ամենին չը կայ: Իսկ եկեղեցի, թէպէտ և կիսաքանդ և կ'օրծանուած, Կիրակոս էֆ. մինչև 76 համեր է, որոնց վրայ շատ շանկան արձանապրութիւններ քաղած է: Նոյնիական և կամ եկեղեցական արարողութիւններ ունեն, որք քրիստոնէից արարողութիւններն են: Սէխտը իր ժողովուրդը մասնաւոր օրերը կը հաղորդէ հացով, զոր գինւոյ մէջ կը թաթխեն, եթէ գինի չը կայ, շրջա մէջ: Այս հաղորդութիւնն նոցա պիտանի եկեղեցական արարողութիւնն է: Նոցա չունեն թուրքերուն ոչ օրուած (ծով), և ոչ էլ նամաղը:

Ի վաղուց անտի Տերսիմի (կարծեցաւ պէտք է ըսել այսուհետեւ) քրդերը անխախ մնացեր են և երբէք վճարած չունեն կառավարութեան որ և է տուրք մը: Կ. Պոլիսի հրամանաւ, տարիներ յառաջ, այժման քրդը խմայիլ բաշային եղբայրը 20—25000 զօրքով Տերսիմի վրայ քայլել է զայն նուաճելու համար: Թուրքերը մեծ կտորած ունեցեր են և հրամանատարն ալ բռնուելով զիսատուր է Տերսիմի մէջ: Այն օրէն ի վեր Թուրք կառավարութիւնը փորձ երբէք փորձած չէր մինչև Կիրակոս էֆէնդիի օրն, որոյ անդ ուղարկվելը, երեկ, օգուտ մ'էթէ ունենայ, այդ օգուտը թուրքերէն ի զատ ազդի մը պիտի երթայ: Կիրակոս էֆ. տարի մ'առաջ խնդրած էր Պատրիարքի ձեռքով, զԱրարատեանն ընկերութիւնն որ

Տերսիմի մէջ զպրօններ բանայ: զԱրարատեանն կը բանայ զպրօն—բայց ոչ թէ Տերսիմի մէջ, այ նորա շուրջը, ի Գոլի և ի Չարսանճագ, ինչպէս որ կը տեսնուի իր տեղեկագրէն: Կիրակոս էֆ. կը զանգատի այդ որոշումն և կարծում պէտք պիտի լինի վերստին մարդ ուղարկել Տերսիմի ծոցը վարժարան մը հաստատելու: Յոյսով ենք թէ այս էլ կիրադրուի և այդ 300,000 ամենազեղեցիկ և ամենակայտառ հայերը կը վերադարձնեն բոլորովին հայութեան գիրկը: Արդեօք որքան այսպէս քրդերը կան, որոնք հալածանք և հարստահարութիւն բռնադատեալ մուսլիմ են հայութիւն, մուսլիմ են կրօնը և թափառիկ կը չըլնեն իրանց դադաթը, անտառաց շուրջը, ոչ իսլամութեան հաւատարմի և ոչ քրիստոնէութեան:

ՄԵՍԿԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՍԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

10.10.07, 2 դեկտեմբեր: Կալկաթայից պաշտօնապէս հաղորդում են, որ երէկ թիւ 2 նամակները հաւաքվեցան մեծ թիւով Բէնիշ շահի և Կոլիկի մօտ: Մակէթսօն պահպանեց Բալահաստարի դիրքը, բայց չը կարողացաւ քշել թշնամուն բարձրութիւններից, որտեղ նրանց զիբըր ուժեղ էր և բռնված էր բազմաթիւ զօրքերով: Բէնիշ, վերադառնալով այսօր յարձակվեց թշնամու դէմ և յետ մղելով նրան, գրաւեց Բէնիշահի բարձրութիւնները: Մակէթսօնի զօրաբաժնում սպանվեցան երեք սօլդատներ և վիրաւորվեցան ևս յոթ օֆիցէրներ: Եւ տաս սօլդատներ: Բէնիշից զեկուցում չը ստացվեցաւ:

10.10.07, 3 դեկտեմբեր: (Պաշտօնական հեռագիր): Գնեւալ Բօբէրաս հաղորդելով իր յաղթութեան մասին, ասում է, որ զեկտեմբերի 13-ին զիշերը մտադրված էր յարձակում անել: Մեծ բազմութեամբ գուժարկած ցեղերը, յարաբերութիւններ հաստատեցին քաղաքի բնակիչների հետ: Թշնամիները կորուստը մեծ է, բայց չը շրջանակում գեռ կան թշնամիների խմբեր: Բօբէրաս զիտաւորութիւն ունի նորից յարձակվել նրանց դէմ, եթէ նրան անպապաղ չը ցրվեն: Երեք օրվայ անդիպցիների կորուստը հետեւան է: 43 հոգի սպանվածներ, որոնց թիւում 6 օֆիցէրներ և 76 վիրաւորվածներ, որոնց թիւում 10 օֆիցէրներ:

ԿԱՆԿԱՆԱՐ, 2 դեկտեմբեր: Գնեւալ ըստաւարտ հրաման ստացաւ ուղարկել մի զեսպան դէպի Հերաթ, Խիւր-Սանին տեղեկացանելու համար որ նա անդիպցիների շահերը աչքի առջև ունելով պահպանէր Հերաթը, եթէ ինքն ցանկանում է այնտեղ մնալ: Այդ քայլը ցոյց է տալիս, ինչպէս կարծում են, որ անդիպցիները առաջ կը խաղան դէպի Հերաթ, եթէ Խիւր-Սանը կը հրաժարվի ի նկատի առնել ստացված նախազգուշութիւնը:

10.10.07 3 դեկտեմբեր: Գնեւալ Բօբէրաս հաղորդում է, որ պատերազմական գծի վրա յաղթութիւն է տարել և դիտաւորութիւն ունի նորից յարձակվել աւազանների դէմ, եթէ նրանք չը ցրվեն:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

